

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԴԱՏԱՎՈՐ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԴԱՄ ԸՆՏՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

01.08.2024

Հաշվի առնելով Դատավորների ընդհանուր ժողովի Ուսումնական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի **թվով 2** թափուր տեղի առկայությունը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 77-րդ հոդվածով, Դատավորների ընդհանուր ժողովի 2018 թվականի մայիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 02L որոշմամբ (այսուհետ՝ Ընդհանուր ժողովի որոշում) և Բարձրագույն դատական խորհրդի 2020 թվականի հունիսի 3-ի թիվ ԲԴԽ-32-Ն-7 որոշմամբ և Վճռաբեկ դատարանի նախագահի 2024 թվականի հուլիսի 31-ի՝ Դատավորների ընդհանուր ժողով հրավիրելու մասին թիվ 69-Ա հրամանով, Դատավորների ընդհանուր ժողովի (այսուհետ՝ Ընդհանուր ժողովի) Ուսումնական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամներ ընտրելու նպատակով

ՏԵՂԵԿԱՑՎՈՒՄ Է՝

Ուսումնական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամներ կարող են առաջադրվել.

- ինքնաառաջադրման կամ,
- այլ դատավորի կողմից թեկնածուի համաձայնությամբ առաջադրվելու կամ,
- հասարակական կազմակերպության կողմից առաջադրվելու եղանակով:

1. Ընդհանուր ժողովի Ուսումնական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի թեկնածու ինքնաառաջադրվելու կամ դատավորի կողմից առաջադրվելու մասով.

Օրենսգրքի 77-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ Ուսումնական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամ կարող է ընտրվել այն իրավաբանը, որն օժտված է բարձր մասնագիտական որակներով և ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան կամ մասնագիտական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձառություն:

Ընդհանուր ժողովի որոշման 76.7. կետի համաձայն՝ Ուսումնական հարցերի (...) հանձնաժողովների դատավոր չհանդիսացող անդամի թեկնածուի **ինքնաառաջադրման դեպքում** թեկնածուն Դեպարտամենտ է ներկայացնում դիմում՝ կցելով.

- 1) թեկնածուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը և էլեկտրոնային փոստի հասցեն.
- 2) թեկնածուի 3x4 սմ չափսի երկու գունավոր լուսանկար.
- 3) թեկնածուի կենսագրությունը և գործունեության մասին տվյալները.
- 4) թեկնածուի գրավոր համաձայնությունը՝ իր կենսագրությունը և գործունեության մասին տվյալները դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակելու վերաբերյալ.
- 5) իրավաբանական կրթության առկայությունը հավաստող փաստաթուղթ.
- 6) գիտական աստիճանի առկայությունը և (կամ) պահանջվող մասնագիտական աշխատանքի փորձառությունը հավաստող ապացույց, այդ թվում՝ աշխատանքային պարտականությունները հավաստող պաշտոնի անձնագիր կամ այլ փաստաթղթեր.

7) համաձայնություն՝ իր վերաբերյալ պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից, թեկնածուին ներկայացվող պահանջների համապատասխանության ստուգման սահմաններում, անհրաժեշտ անձնական տվյալներ ստանալու մասին:

Ընդհանուր ժողովի որոշման 76.8. կետի համաձայն՝ Ուսումնական հարցերի (...) հանձնաժողովների դատավոր չհանդիսացող անդամի թեկնածուի՝ **դատավորի կողմից առաջադրվելու դեպքում** դատավորը Դեպարտամենտ է ներկայացնում դիմում և 76.7 կետում նշված փաստաթղթերը, ինչպես նաև թեկնածուի գրավոր համաձայնությունը՝ դատավորի կողմից որպես թեկնածու առաջադրվելու վերաբերյալ:

2. Ընդհանուր ժողովի Ուսումնական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի թեկնածու ներգրավելու նպատակով հասարակական կազմակերպությունների կողմից առաջադրվելու դեպքում հասարակական կազմակերպություններին ներկայացվող պահանջների մասով.

Ընդհանուր ժողովի որոշման 76.5-րդ կետի համաձայն՝ Ուսումնական հարցերի (...) հանձնաժողովների դատավոր չհանդիսացող անդամների թեկնածուների՝ հասարակական կազմակերպությունների կողմից առաջադրվելու դեպքում հասարակական կազմակերպություններին ներկայացվող պահանջները (...) սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:

Բարձրագույն դատական խորհրդի 2020 թվականի հունիսի 3-ի թիվ ԲԴԽ-32-Ն-7 որոշմամբ սահմանված Հավելված 1-ի 2-րդ կետի համաձայն՝ **թեկնածու կարող են առաջադրել հետևյալ պահանջները բավարարող կազմակերպությունները.**

1. Կազմակերպությունը պետք է գրանցված լինի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում,

2. Ընդհանուր ժողովի Հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի թեկնածուների ընտրության նպատակով փաստաթղթերը ներկայացնելուն նախորդող առնվազն հինգ տարիների ընթացքում Կազմակերպության կանոնադրական նպատակները պետք է ներառած լինեն ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության կամ դատական իշխանության գործունեության ոլորտները:

Որոշման Հավելված 1-ի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ Ընդհանուր ժողովի Հանձնաժողովի անդամի թեկնածու առաջադրելիս **Կազմակերպությունը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.**

1) Կազմակերպության կողմից Ընդհանուր ժողովի Հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի թեկնածուի ընտրության նպատակով Դատական դեպարտամենտին հասցեագրված դիմում, որը պետք է ստորագրված լինի Կազմակերպության նախագահի կողմից և իր մեջ ներառի տեղեկություններ Կազմակերպության գտնվելու վայրի, ծանուցման համար էլեկտրոնային փոստի, թեկնածուի մասին: Դիմումը պետք է ներառի նաև Կազմակերպության տեղեկացված լինելու և համաձայնություն վերաբերյալ նշում՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածով սահմանված կարգավորումների և Կազմակերպության վերաբերյալ տեղեկությունները դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակելու պահանջների մասին.

2) կազմակերպության պետական գրանցման վկայականի, կանոնադրության և դիմելուն նախորդող հինգ տարիների գործունեության տարեկան հաշվետվությունների պատճենները.

3) թեկնածուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը և էլեկտրոնային փոստի հասցեն.

4) թեկնածուի 3x4 սմ չափսի երկու գունավոր լուսանկար.

5) թեկնածուի կենսագրությունը և ծավալած գործունեության վերաբերյալ տեղեկությունները.

6) թեկնածուի գրավոր համաձայնությունը՝ Կազմակերպության կողմից որպես թեկնածու առաջադրվելու և իր վերաբերյալ ներկայացված տեղեկությունները «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 77-

րդ հողվածով սահմանված կարգավորումների պահանջներին համապատասխան դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակելու մասին.

7) նոտարական կարգով հաստատված բանավոր հայտարարություն՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 112-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված սահմանափակումների բացակայության և Թեկնածուի՝ որևէ կուսակցության անդամ չլինելու մասին.

8) բարձրագույն իրավաբանական կրթության՝ պահանջվող որակավորման աստիճանի առկայությունը հավաստող փաստաթուղթ.

9) հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ.

10) իրավագիտության բնագավառում գիտական աստիճանի առկայությունը կամ պահանջվող մասնագիտական աշխատանքի փորձառությունը հավաստող ապացույց, այդ թվում՝ աշխատանքային պարտականությունները հավաստող պաշտոնի անձնագիր կամ այլ փաստաթղթեր.

11) համաձայնություն՝ Թեկնածուի վերաբերյալ պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից, Թեկնածուին ներկայացվող պահանջների համապատասխանության ստուգման սահմաններում, անհրաժեշտ անձնական տվյալներ ստանալու մասին:

4. Հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստվում է ուսումնական հաստատություններում հայերենով կրթություն ստացած կամ կրթական ծրագրերով նախատեսված՝ հայոց լեզու առարկայի ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորում անցած լինելու վերաբերյալ ուսումնական հաստատությունների տված ավարտական փաստաթղթով (վկայական, ատեստատ, դիպլոմ): Հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող ավարտական փաստաթղթի բացակայության դեպքում հայերենին տիրապետելու հանգամանքն ստուգվում է կրթության և գիտության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարի սահմանած կարգով:

Ընդհանուր ժողովի Ուսումնական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի թեկնածուի համապատասխան փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել 2024 թվականի օգոստոսի 15-ը ներառյալ, առձեռն կամ փոստային եղանակով, յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 09:00-ից 18:00-ն (ընդմիջման ժամ՝ 13:00-14:00) ք. Երևան, Կորյուն 15/1 հասցեով:

Լրացուցիչ հարցերի պարզաբանման համար կարող եք զանգահարել (010) 511-823, (010) 511-822 հեռախոսահամարներին կամ նամակ գրել info@court.am էլեկտրոնային փոստի հասցեին: